

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՐԴԱՆԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ.— Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ. Արք. Մամուկեան, Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան իր պատմական այցելութիւնը աւարտելէ ետք, այս շաբաթ Երուսաղէմ վերադարձաւ եւ պաշտօնական ընդունելութեամբ դիմաւորուեցաւ Ս. Երկրի Հայ համայնքին կողմէ:

Ս. Թագաւորման շաբաթը, Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը, իրենց դպրոցական տարազներով, շարուած փողոցի մայրերուն, ամձկագին կը սպասէր Պատրիարք Հօր վերադարձին: Երբ Սրբազան Հօր շքախումբը Յոպպէի դուռ կը հասներ, դպրոցական աշակերտութիւնը, երիտասարդներ եւ տարեցներ խանդավառութեամբ կը դիմաւորէին իրենց մօր գահակալը եւ կ'ողջունէին ամոր Յորդանան այցելութենէն ետք բերկրառիթ վերադարձը Ս. Աթոռ:

Պատրիարք Հօր Յորդանան այցելութիւնը հիմնական մպատակն էր յարգանք մատուցանել Յորդանանի վեհապետ Հիւսէյմ թագաւորին որ պետական ճանաչում պիտի տար Պատրիարքի ընտրութեան, եւ պիտի յամձմէր Սրբազան Հօր աւանդական « Յէրմանը », Օսմանեան կայսրերու ժամանակէն մնացած աւանդութիւն մը, որ կը վերահաստատէ եւ կը ճանձնայ բոլոր իրաւունքներն ու իրաւասութիւնները, որոնք շնորհուած են Իսլամական գերիշխանութեանց կողմէ Երուսաղեմի Պատրիարքներուն:

(Պատրիարք Հօր առաջին այցելութիւնը չէր այս դէպի Յորդանան: Ան հոն եղած է զամազան առիթներով, առաջինը 1940ին, երբ երիտասարդ Հայր Սուրբ մըն էր, մասնակցելու համար Ամմանի մէջ տեղի ունեցած Հայկական դաշտահանդէսին իբրեւ վերահսկիչ մարգախաղերուն:)

Պատրիարք Հայրը, Ուրբաթ Սեպտեմբեր 14ի առաւօտեան պաշտօնական պատուիրակութեամբ Ամման մեկնեցաւ: Պատուիրակութեան մաս կը կազմէին Սեւան Եպս. Ղարիպեան, Հայրիկ վրդ. Գալայմեան, Գաւազանակիր Համբարձում վրդ. Քէշիշեան եւ Պատրիարքութեան քարտուղար Տիար Գեորգ Հիմդլեան:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Պատրիարք Սրբազանը Յորդանան գետի միւս կողմը ընդունուեցաւ Յորդանանի Թագաւորի ամձնական ներկայացուցիչ իշխան Ռա'ատ իպմ Զաիտի եւ խումբ մը բարձրաստիճան սպաներու կողմէ: Ամոնց մաս կը կազմէր այդ մարզի կառավարիչը:

Յորդանանի Հայ գաղութի ներկայացուցիչները, զխաւորութեամբ իրենց Հոգեւոր Վերատեսուչ Վահան Եպս. Թօփալեանի, կամուրջ եկած էին, դիմաւորելու համար իրենց Պատրիարքը եւ այս երկար ժամանակ ակնկալուած գալուստի առթիւ իրենց ուրախութիւնը արտայայտելու իրենց մօր հոգեւոր պետին: Ներկայ էին մասն Յորդանանի քոյր եկեղեցիներու ներկայացուցիչները:

Պր. Նուպար Գաբրիէլեան, Հայ Համայնքային խորհուրդի փոխ-նախագահ (որ պիտի դառնար Պատրիարքի պաշտօնական թարգմանիչը իր ամբողջ այցելութեան ընթացքին) բարի գալուստի ճառ մը խօսեցաւ, արտայայտելով Յորդանանի Հայ գաղութի մտածումները ու զգացումները, Պատրիարք Հօր Յորդանանեան այցը նկատեց կարեւոր շրջադարձ մը Յորդանանի Հայոց պատմութեան մէջ:

Շքախումբը ուղղուեցաւ դէպի Ամմանի Հայոց Ս. Թադէոս եկեղեցին, ուր Պատրիարք Հայրը գոհաբանական աղօթք մը ըրաւ եւ հակիրճ պատգամ մը տուաւ:

« ՓԱՌԱՒՈՐ ԺԱՌԱՆԳԸ »

Պատրիարք Հայրը խօսեցաւ « Փառաւոր ժառանգի » եւ Հայ Գաղութի հրաշալի պատմութեամբ մասին: Ան կոչ ըրաւ Յորդանանահայութեան որ շարունակեմ մնալ որպէս հաւատարմիք քաղաքացիներ իրենց բնակած երկրին, զօրավիգ կանգնին թագաւորին, իր ջանքերով մէջ խաղաղ լուծում գտնելու համար քաղաքական տագնապին:

Ան մեծ գոհումակութեամբ արտայայտուեցաւ որ Հայերը Յորդանանի մէջ միշտ խաղաղ, ապահով եւ բարգաւաճ օրեր անցուցած են, Հաշիմական Թագաւորութեան ժամանակաշրջանին:

Սրբազան Հայրը երբ դուրս կու գար եկեղեցիէն, աւելի մեծ բազմութիւն մը զինք կը դիմաւորէր: Անոնց կորիզը կը կազմէին փոքրիկ մանուկները, որոնք ջերմօրէն կու գային համբուրելու Սրբազանին Ս. Աջը: Պատրիարք Հայրը խօսեցաւ անոնց, օրհմեց զանոնք եւ շնորհակալութիւն յայտնեց իրենց սիրոյն համար:

Երեկոյեան, Պատրիարք Հայրը մերկայ եղաւ ընդունելութեան մը Մարիօթ հիւրանոցին մէջ, որ կազմակերպուած էր մախաձեռնութեամբ Հայ Համայնքային Խորհուրդին: Այս ձեռնարկը իրեն դարձեալ առիթ ընծայեց խօսելու համար գաղութի կացութեան մասին:

Սրբազան Հայրը ըսաւ որ անհրաժեշտ է աւելի մեծ ոգեկանութեամբ, եղբայրական մօտեցումներով եւ համագործակցութեամբ աշխատիլ, գաղութի զօրացման համար: Ան զգուշացուց որ ամփասմականութիւնը անհամաձայնութեան կ'առաջնորդէ եւ ի վերջոյ կազմալուծման:

Յաջորդ օրուան ժամանակացոյցը մոյմբան բազմազբաղ պահեց Պատրիարք Սրբազանը մոյմ ատեն գոհումակութեան առիթներ տալով: Առաւօտեան ժամը 10ին համդիպում ունէր փոխ-վարչապետ եւ արտաքին գործոց մախարար Մարուան Էլ Քասեմին հետ, ինչպէս նաեւ համդիպում մը մերքին գործոց մախարար Սալէմ Մասսայտէի հետ:

« ՖԵՐՄԱՆ »

Պատրիարք Հօր չորս օրուայ այցելութեան ամենէն մշամակալից պահը, մոյմ օրուան յետ միջօրէի համդիպումն էր Նորին Վեհափառութիւն Հուսէյն թագաւորին հետ ուր Վեհապետը թագաւորական պալատին մէջ Սրբազան Հօր պարգեւեց ակնկալուած « Ֆերման »ը (հրովարտակ): Հուսէյն Ա. Թագաւորը պաշտօնական կնիքով մը կը վաւերացնէ Սրբազան Հօր ընտրութիւնը որպէս Պատրիարք Յորդանանի եւ Ս. Երկրի:

Յուզիչ պահ մըն էր երբ Յորդանանի Վեհապետը իր ձեռամբ Սրբազան Հօր կը յանձնէր թանկարժէք մագաղաթը: Այս Ֆերմանի բովանդակութիւնը կը յիշեցնէր 7րդ դարու Խալիֆա Օմար Իպն Խաթթապի ձեռքով տրուած առաջին հրովարտակը:

Գաղութի ամդամները, որոնք չէին կրնար մասնակցիլ այս արարողութեան, իրենց տուններում մէջ հեռուստացոյցի միջոցաւ դիտեցին Պատրիարք Հօր Թագաւորական պալատին մէջ ընդունելութիւնը եւ գեղագիր « Ֆերմանին » յանձնումը: Նաեւ ունկնդրեցին իրենց Հոգեւոր պետին շնորհակալական խօսքն ու քաջալերական մաղթանքը Յորդանանի Թագաւորին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍԻՐԸ

Պատրիարք Սրբազանը իր շնորհակալութիւնը յայտնեց Թագաւորին « Յանուն Ամեն-Մագթած եւ Ողորմած Աստուծոյ », ըստ Բուրանին, զայն նկատելով ամենէն պատշաճ արտայայտութիւնը « մեր երախտագէտ զգացումներում Աստուծոյ համդէպ որ մեզ առիթը ընծայեց Ձերդ Վեհափառութեան ներկայանալու եւ ամենապէս շնորհակալութիւն յայտնելու,

որպես Յորդանամի եւ Ս. Երկրի Պատրիարք մեր ճամաչման համար, մեզ շնորհելով Ձեր թագաւորական « Ֆերման »-ը, հաստատելով եւ օրհնելով մեր ընտրութիւնը Ս. Յակոբեանց Միաբանութեան կողմէ:

« Այս պատմական վաւերաթուղթը կը յաւերժացնէ դարերով վերապրած թանկագին աւանդութիւն մը որ կենդանի ապապցոյցն է այն մասնաւոր հոգածութեան, որ յաջորդական Իսլամական իշխանաւորներն ունեցած են իրենց Քրիստոնեայ համայնքներուն հանդէպ: Այդ անկասկածօրէն թանկարժէք եւ կարեւոր պիտի մնայ Հայութեան համար, քանի որ այդ կը կրէ մակագրութիւնը Արքայի մը որ Աստուծոյ պատգամաբեր Մարգարէին սերունդէն է եւ որուն հետեւորդներուն հետ մենք կը բաժնենք Սուրբ Գրքի ժողովուրդ ըլլալու առանձնաշնորհումը »:

Պատրիարք Հայրը ըսաւ որ երեսուն տարիներ առաջ « ուրիշ Հայ Պատրիարք մըն ալ՝ համգուցեալ Եղիշէ Տէրտէրեան, կամզմած է Ձեր վեհաշուք ներկայութեան առաջ եւ ընդունած Ձեր վաւերացման կմիքը մոյմ թագաւորական ձեռքերէն, եւ այսօր մենք առանձնաշնորհուած ենք կրկին վկայելու Ձերդ Վեհափառութեան անձնական խմամբին եւ հոգածութեան մասին՝ հանդէպ Ձեր Քրիստոնեայ համայնքներուն, մասնաւորաբար Հայերուն որոնք արդարեւ կը հաւատան թէ մասնաւոր տեղ մը ունին Ձեր համակրանքին մէջ »:

« Երբ 29 Մարտ 1990ին Երուսաղէմի Հայոց Վանքի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամները մօր Պատրիարք ըմտրեցին, զինք ոչ միայն պատասխանատուութեամբ զինեցին, պաշտպանելու համար Ս. Յակոբեանց Մայր Աթոռը, այլեւ իր ուսերուն դրին ծանր պարտականութիւնը ծառայելու իր հօտին, Ս. Քաղաք Երուսաղէմի մէջ եւ Յորդանան գետի գոյգ ափերուն վրայ: »

ԾԱՂԿՈՂ ԳԱՂՈՒԹՐ

« Այստեղ, սրբազան գետի Արեւելեան կամաչ ափերուն վրայ, մեր եղբայրներն ու քոյրերը կը բարգաւաճին առաջնորդութեամբ եւ պաշտպանութեան ներքեւ Արքայի մը, որուն իմաստութիւնը եւ լուսաւորեալ քաղաքականութիւնը ժամանակագրուած են պատմութեան տարեգրութեանց մէջ:»

Պատրիարքը ընդգծեց այն իրողութիւնը թէ « Յորդանանի Հաշիմական թագաւորութեան Հայ հպատակները ապրած են խաղաղութեան եւ բարգաւաճման երկար տարիներ: Անոնք սերունդներով ապրած են այս հզօր Հարստութեան իրաւասութեան ներքեւ, սատարելով երկրի եւ ժողովուրդի բարեկեցութեան, իրենց քաղաքացիական պարտականութիւնները լի ու լի կատարելով, յաճախ վստահելի բարձր պաշտօններ ձեռք բերելով, միշտ երախտագէտ մնալով իրենց Արաբ հիւրընկալներուն, որոնք իրենց սիրտերն ու դռները բացին Հայութեան առջեւ:»

« Արաբական Աշխարհը միշտ ապահով կայան մը հայթայթած է հալածուած փոքրամասնութիւններուն: Վաթսունը հինգ տարիներ առաջ Յորդանանի ժողովուրդը ապացոյցը տուաւ իր աւանդական հիւրասիրութեան եւ հոգածութեան, երբ ընդունեց 1915 թուականի ջարդերէն վերապրող Հայերու զանգուածները, ամռնց հայթայթելով սննդեղէն, ապաստանարան եւ միւսքարանք, բուժելով ամռնց վերքերը եւ օգնելով որ վերագտնեն իրենց կեանքի արժանապատուութիւնը »:

Անդրադառնալով Յորդանանի Հայ գաղութին, Պատրիարք Հայրը այն զգացումը արտայայտեց որ կանգնելով « այս հիւրընկալ հողին վրայ, Ձերդ Վսեմութեան ներկայութեան » ամռնք զգացին որ իրենք ընտանիքի մը եւ բարեկամներու մաս կը կազմեն:

« Հայերը այստեղ միշտ իրենց զիրենք իրենց տան մէջ զգացած են: Այս զգացում մըն է որ մենք ունեցած ենք ամէն անգամ որ Ձեր մէջ գտնուած ենք: Նոյն զգացումը կը հաստատեն քաղաքական այն փոփոխութիւնները զորս Ձերդ Վեհափառութիւնը իրագործած է եւ որոնք Յորդանանի պատմութեան մէջ մօր էջ մը բացած են եւ կ'առաջնորդեն աւելի մեծ բարգաւաճումի բոլորի համար »:

Երբ մոտենում էր Պատրիարքը իր հայեացքը կ'ուղղեր իր ձեռքին մեջ գտնուող այդ բանկարժեք վաւերաթուղթին, միաժամանակ կը յիշէր մախորդ երեսուն տարուայ խոռվայոյզ իրադարձութիւնները: Երուսաղէմը շատ տառապեցաւ. . . .:

« Մենք վստահ ենք իր հաւատարմութեամբ մեր եւ Հաշիմեան Հարստութեան համդէպ» Յորդանանեան թագաւորը յայտարարած էր իր « Ֆերման »-ին մէջ, որ կը վերահաստատէր Հայոց Պատրիարքի իրաւասութիւնն ու առանձնաշնորհումները Ս. Երկրի մէջ:

Հիւսէյն Թագաւորը գնահատեց Պատրիարք Հօր գիտակցութիւնը եւ փորձառութիւնը եկեղեցական խնդիրներ կարգաւորելու գործին մէջ եւ լիայոյս է որ Ամենապատիւ Պատրիարքը սէր եւ հաւասարութիւն պիտի սերմանէ իր համայնքի անդամներուն մէջ:

« Ֆերման »ը զինեց Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը « բոլոր իրաւասութիւններով՝ կապուած իր գործին հետ, եւ շնորհեց ամոր գանձը գործադրելու ոյժը բոլոր իրաւունքներով, իրաւասութիւններով, առանձնաշնորհումներով եւ ամենց հետ կապուած մեծաշնորհներով »:

Յորդանանի վեհապետը մանա իրաւունք տուաւ Պատրիարքին « գործադրելու այն բոլոր ինքն սովորութիւններն ու աւանդութիւնները » առնչուած իր պաշտօնին:

Թագաւորին հետ այս համդիպումէն յետոյ Պատրիարքը այցելեց Յորդանանի միւս հոգեւոր պետերուն .- Կոստանտին Եպս. (Յոյն Ուղղափառ), Սալիմ Եպս. Սայեղ (Լատին), Սապա Եպս. Եօհագիմ (Յոյն Կաթօլիկ) եւ Էլիա Խուրի (Աւետարանական):

Հոգեւոր պետերը խորհրդակցեցան ընդհանուրի վերաբերող հարցերու շուրջ եւ բոլորն ալ պատրաստակամութիւն յայտնեցին Համաշխարային եկեղեցական թափը պահպանելու:

Երեկոյեան, Պատրիարք Հայրը պատուոյ հիւրն էր Ամմանի Ազգային Մարզական Միութեան ակումբի կողմէ կազմակերպուած ընդունելութեան:

Պատրիարք Հայրը ըլլալով արուեստներու եւ մարմնամարզական շարժումներու քաջալերող, զովեց ակումբը որ իր անդամներուն մէջ ունի բազմաթիւ մտաւորական տաղանդներ:

Հետեւաբար, Սրբազան Հայրը մատնանշեց որ «ուսումի ասպարէզը մասնաւոր մտաւորականներու համար չէ, այլ բոլորին մատչելի պէտք է ըլլայ»:

Ան թելադրեց երիտասարդութեան որ աւելի ժամանակ տրամադրեն ընթերցանութեան: «Զկայ աւելի մեծ հաճոյք քան ընթերցումը» Սրբազան Հայրը յիշեցուց բոլորին:

Ընդունելութիւնը տեւեց մինչեւ ուշ գիշեր, եւ երբ Պատրիարքական շքախումբը մեկնեցաւ դէպի իր բնակավայրը, արդէն յոգնութեան նշաններ նշմարելի էին շատ մը դէմքերու վրայ, բացառութեամբ 72 տարեկան առոյգ Պատրիարքին:

Կիրակի օրը պայծառ եւ տաք օր մըն էր, երկնքին վրայ ամպեր չկային, ուրախալի օր մը պիտի ըլլար Յորդանանի Հայ Համայնքին համար:

Համգիստի եւ աղօթքի օր մըն էր: Երբ Պատրիարքական շքախումբը ճեպել էշրէֆիէի վրայ գտնուող եկեղեցին կը հասներ Ս. Պատրիարքի արարողութեան համար, հոն կը դիմաւորուէր հարիւրաւոր հաւատացեալներէ:

ՀՍԿԱՅ ԱՄԲՈՒՆԸ

Տեղացի բնակիչները երդուեցան որ առաջին անգամ էր արդի պատմության մեջ որ Հայերը այսքան մեծ թուով եւ մերդաշնակօրէն իրար քով կը հաւաքուէին: Ամօնք թակաւորութեամբ բոլոր ծայրամասերէն եկած էին ջերմօրէն ընդունելու համար իրենց Պատ-իրարքը եւ լսելու ամօր բերմէն ողջունի խօսքեր տագմապալի այս օրերուն:

«Դուք էք երկրին աղը» ամ ըսաւ ժողովրդին: Կրկնելով այն խօսքերը որ Տէրը մերշնչած էր իր աշակերտներուն:

«Իմչպէս որ աղը չ'երեւիր երբ կը լուծուի, դուք ալ մոյմպէս պէտք է աշխատիք ձեր համայնքի բարեւաւման համար առանց ցուցամոլութեան եւ ամամձմասիրաբար», Ամ ըսաւ:

Սրբազան Հայրը վերարժարծեց իրենց յոյսերը եւ օգնեց անոնց վերահաստատելու իրենց հաւատքը եկեղեցիին, ազգին եւ մակատազրին հանդէպ: Ամ պատուիրեց անոնց որ չ'ոռնան իրենց երկրի եւ կառավարութեան հանդէպ իրենց քաղաքացիական պարտականու-թիւնները: Կառավարութիւն մը որ շատ առատաձեռն եւ հիւրասէր համդիսացած է մեր ժողովրդին:

Ամեմ. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մամուկեանը միշտ ալ խոր հետաքրքրութիւն ցոյց տուած է Հիմ աշխարհի պատմութեան եւ հմագիտութեան մարզերուն մէջ: Ամերեւ-կայելի պիտի թուէր Սրբազան Հօր համար մեկնիլ Յորդանանէն առանց ճարաշ այցելելու, որ հարուստ է իր սիւնապատ հրապարակներով եւ մեհեաններով:

ԾՐՋԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ

Քալելով Հիմ Հռովմէական պողոտաներու ընդմէջէն Պատրիարք Հայրը զգաց որ ետ գնաց դէպի այդ հիմ շրջանը, երբ խոնարհ «հիւսնի որդի» կը քայլէր, շրջապատուած հզօր Հռովմէական կայսրութեան մահաճգմերէն՝ Պաղեստինի մէջ, քարոզելով երկմայիմ թագաւորութեան բարի լուրը:

Վերապագ սիւները, իրենց սիւնագլուխներու մուրք քանդակուամով, կը թուէին շեշտել յանրժական ըղձամքը մարդուն բանի մը համար որ գերիվեր ըլլար քան մահկա-նացու, աշխարհիկ եւ տափակ գոյութիւնը մարդուն:

Ճարաշէն Ամման վերադարձին, Պատրիարք Հայրը խոհուն կերպով մտած էր իր ինքնաշարժին մէջ, առանձնացած իր խոհերով, ծանրաբեռնուած պատասխանատուութեամբ մը որուն ծանրութիւնը եւ լրջութիւնը չափելու համար քիչ ժամանակ կ'ունենար:

Կէսօրէ վերջ կարն դադար մը ունէր, որմէ ետք շատ մը համդիպումներ ունեցաւ, իսկ երեկոյեան Հ.Օ.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ հրաւիրուած էր ի պատիւ իրեն սարքուած ընդունելութեան:

Պատրիարք Հայրը երբ հրաւիրուեցաւ իր սրտագին խօսքը ընելու, ի միջի այլոց յիշեցուց բոլորին իրենց պարտականութիւնները: Երկար խօսեցաւ մարմնամարզութեան կարեւորութեան մասին բարձր ոգիով խումբեր պատրաստելու, եւ զարգացնելու համար անդամներուն մէջ ճշմարիտ խումբի ոգին, ուր կը սորվին ամամձմասէր ըլլալ եւ յարա-տեւօրէն հետապնդել առաջադրուած մպատակները իբրեւ մարզիկներ:

Յաջորդ առաւօտեան, Նորին Ամենապատուութիւնը այցելեց Խորհրդարանի ատենա-խօսներ Պր. Ահմատ Էլ Լաուզիին, Պր. Սուլէյման Արարին եւ վարչապետ Մուտար Պատրա-մին:

Կէսօրէ վերջ Պատրիարք Հայրը ուղղունցաւ դէպի Մատապա, Յորդանանեան փոքրիկ քաղաք մը, որ ըշամաւոր է իր հիմ երուսաղէմի Բիւզանդական շրջանի մօզայիքէ քարտէսով: Երբ կը հիւանար եւ կ'ուսումնասիրէր այդ մուրը խնամկարմերը, Սրբազան Հայրը խոկումի պահ մը ունեցաւ, հիւանալով այդ փոքրիկ գումաւոր քարերու մմայում քարմուքեան եւ կենդանութեան, որոնք մեզ հասած են այդ ժամանակէն:

ԶԱՅՆ ՄԸ ԱՄԲՈՒՍԻՆ ՄԷՋԷՆ

Զամգերը ղողամջեցիմ եւ աւանդական տարազներով Արաբ Տիկիմներ երգեցիմ իրենց ուրախ երգերը: Հետաքրքիր ամբոխը շրջապատած էր Պատրիարքը: Պատրիարքական շքախումբը երբ կը պատրաստուէր հեռանալ այդ հիւրըմկալ քաղաքէն, ձայն մը լսուեցաւ ամբոխիմ մէջէն: Բառերը անկասկած որ Հայերէն էին: Պատրիարք Հայրը ինքզինքը դէմ յամդիման գտաւ տարիքոտ մարդու մը: Ան Հայու դիմագիծ ունէր:

Պատրիարք Հայրը հետաքրքրուած հարցուց թէ իրապէս Հայ մըն էր: Ապա տատամսոտ քայլերով յառաջ ընթանալով, ծերունիմ հարցուց Պատրիարք Հօր թէ կը փափաքի՞ իր տունը այցելել:

Պատրիարք Հայրը սիրով ընդունեց ծերունի Հայուն առաջարկը եւ իր տունը առաջնորդունցաւ:

Շրջապատուած իր ընտանիքով (չորս մամշ գաւակներ եւ չորս աղջիկներ, որոնցմէ մէկ քանիմ Հայաստան ուսանած էին) ծերունի Վարդանը հիւրըմկալը եղաւ Սրբազան Հօր:

Այս ամակմկալ միջադէպը Պատրիարք Հօր բազմազբաղ շարքաւայ ամենէն համգիստ, համելի եւ յուզիչ պահերէն մէկն էր:

Հեռաւոր հորիզոնիմ մէջ Նաբաւ լերան գագաթը կ'երեւէր ամպերու տակ: Հոս այն աւանդական վայրն է ուր թաղուած է Մովսէս Մարգարէն: Պատրիարք Հայրը ընդունունցաւ Ֆրանչիսկեան Միաբանութեան անդամի մը կողմէ: Այս Լատին Միաբանը լայնածաւալ հմագիտական աշխատանք տարած է այդ վայրիմ մէջ եւ ճանչուած դէմք մըն է, եւ խոր սէր ունի հմագիտութեան եւ պատմութեան համդէպ: Այս Միաբանութեան հիմնադիրը, Ս. Ֆրանչիսկոսը, ժառանգորդը ըլլալով Իտալացի հարուստ ընտանիքի մը, թողնելով համբաւ եւ հարստութիւն, մախըմտրած է ապրիլ աղքատիկ, մուրացկան եւ ամտուն կեանք մը, իր հոգեւոր կոչումը իրագործելու համար:

Զմայած որ այս Միաբանութիւնը աղքատութեան ուխտ կ'առնէ, բայց անկարելի է Պատրիարք Հօր բարի Վերադարձ մաղթել առանց յուշամուէր մը տալու:

Ամման վերադառնալով կարն համգիստէ մը յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը հրաւիրունցաւ ընդունելութեան մը կազմակերպուած Հայ Համայնքայիմ Խորհուրդիմ կողմէ:

Սրբազան Հայրը պատեհութիւնը ունեցաւ խորհրդակցելու գաղութի ընդհանուր հարցերու մասին եւ իր թելադրութիւնները ընելու անոնց կենսական խնդիրներու լուծման մասին: Սրբազան Հայրը մաւն մկատի առաւ Հայ Համայնքայիմ Խորհուրդի պարտականութիւնները եւ Հայց. եկեղեցւոյ կազմակերպման դրոյթը որոնք կարիքը ունին վերատեսուքեան:

Յաջորդ օրը, որ Սրբազան Հօր վերջին օրն էր Յորդանանի մէջ, Պատրիարքը ընդունունցաւ Իսլամ գերագոյն դատաւոր Շէյխ Մուհամմէտ Մուհէյլամի կողմէ: Երկու հոգեւոր պետերը կրօնական հարցերու շուրջ կարծիքներ փոխանակեցին հանելի մթնոլորտի մը մէջ:

Նոյն օրը Սրբազան Հայրը առիթը ունեցաւ տեսնուելու Ամմանի Պապական մուիրակ Մօմս. Ռաուֆ Նաճմարի հետ: Նաեւ տեսակցութիւն ունեցաւ Ազգայիմ Մարզական Միութեան

մերկայացուցիչներում հետ:

ՊԱՏՐԻԱՐԻՆ Ի ՊԱՏՐԻ ՏՐՈՒԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Սրբազան Հոր Յորդանանան այցելութիւնը կը մօտեմար իր աւարտին: Նոյն գիշերուայ ժամը 8իմ Պատրիարք Սրբազանի անունով հիւրասիրութեամբ մը հրաւիրուեցան Յորդանանեան բարձրաստիճան պաշտօնեաներ, խորհրդարանի անդամներ, օտար դիւանագետներ, ինչպէս նաեւ զաղութի երեւելի դէմքեր « Hussein Sport City » համալիրին մէջ:

Զորեքշաբթի, Սեպտ. 19ի առաւօտեան, Պատրիարքական շքախումբը ճամբայ ելաւ դէպի կամուրջ եւ Երուսաղէմ հասաւ ժամը 11իմ:

Մինչ զանգակները կը դողանչէին եւ փոքրիկ մանուկները կը ցնծային, Թորգոմ Պատրիարք Մանուկեան, ուղղուեցաւ դէպի Ս. Յակոբեանց Մայրավանք թափօրով մը՝ առաջնորդութեամբ Ս. Թարգմնչաց երկրդ. Վարժարանի աշակերտութեան, ժառանգաւոր սաներու, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ համայն ժողովուրդին:

Հոն Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ Պատրիարք Հայրը ծուկի եկաւ եւ կատարեց իր ուխտը:

Տէրը Պատրիարք Հոր պահպանման էր եւ կը հետեւէր անոր իւրաքանչիւր քայլին:

Ներկայիս արդէն գահակալը Ս. Աթոռին, մոր ոյժերով պիտի լծուի աշխատանքի եւ իր արդար ծառայութիւնը պիտի մատուցամէ իր հօտին:



Ամամ, Յորդանամ, թագաւորական Պալատին մէջ, Թորգոմ
Պատրիարք Մամուկեանի առաջին համոյիպումը Նորին Վեհ. Հիւսէյն
Թագաւորին եւ եղբոր՝ Նորին Վսեմ. Հասամ արքայազարմին հետ
(15 Սեպտ. 1990)



Թորգոմ Պատրիարք Մամուկեան, Ամամ, Յորդանամ,
Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւորէն Արքայական Հրովարտակը
(Ֆէրման) ստացած պատիւն (15 Սեպտ. 1990)



Ամմամ, Յորդանամ, Թորգոմ Պատրիարքի " Հրաշափառով"
մուտքը Ս. Թադեոս եկեղեցիմ: Զախէմ՝ Հայրիկ Վրդ. Գալայնեամ,
Սեւամ եպս. Ղարիպեամ, Համբարձում Վրդ. Քէշիշեամ, Վահամ եպս.
Թօփալեամ (14 Սեպտ. 1990)



Ամմամ, Յորդանամ, Թորգոմ Պատրիարք Խզպաշեամ-Կիւպէնկեամ
Մամկապարտէզի մամուկներում հետ: Նկարիմ մեջ՝ Վահամ եպս. Թօփալեամ՝
Պոգեւոր Վերատեսուչ, Տիկիմ Տիգրամուհի Ձրգրըզնեամ եւ Օր. Գամնի
Ձրգրըզնեամ (15 Սեպտ. 1990)



Ամամ, Յորդանամ, Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Ամամի Մարգական Միութեան Վարչական կազմի անդամներուն
հետ (15 Սեպտ. 1990)



Ամամ, Յորդանամ, Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Ամամի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Վարչական
կազմի անդամներուն հետ (16 Սեպտ. 1990)